

Ա. Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ:

Ֆիլ. գիտ. թեկնածու

ԱՌՈՎՅԱՆԻ ՀԱՅԱՅԷՆՆԵՐԸ ԼԵՂՎԻ ՄԱՍԻՆ

Ժամանակակից հայոց լեզվի պատմութեան ամենակարևոր շրջաններից մեկը անցյալ դարի 40—50-ական թվականներն են: Այդ շրջանը հայտնի է ոչ միայն նրանով, որ տեղի են ունենում տնտեսական, քաղաքական և սոցիալական լուրջ տեղաշարժներ, որ արևելահայ հատվածում ժողովուրդը հասնում է ազգային ինքնագիտակցութեան և ինքնաճանաչման, այլև նրանով, որ այդ շրջանից է սկսվում ազգային լեզվի գիտակցական մշակումը, մեր լեզվաշինութունը: Այդ թվականներին է ծավալվում և սուր բնույթ ստանում «գրապայքարը»: Վերջապես այդ շրջանում է սկսվում անմիջիցս լեզուն միասնական դարձնելու աշխատանքը, լեզվի մշակման ուղիների որոնումները, բովանդակութեան անհրաժեշտ լեզվական ձևերի մշակումն ու լեզվական քարձր մշակութի ստեղծումը:

Մեր նոր լեզվի պատմութեան մեջ առաջին անգամ այդ թվականներից է սկսվում օտար և առաջին հերթին ռուսաց լեզվից գիտակցական փոխառութեան խնդիրը:

«Սա մեր լեզվի պատմութեան երկրորդ շրջանն է՝ ձևավորման փուլը»,—ճիշտ կերպով գրում է ընկ. Սեվակը:¹

Ահա, հենց այդ կարևոր շրջանին է գուգադիպում դեմոկրատ-լուսավորիչ խաչատուր Աբովյանի գործունեութեան ամբողջ շրջանը: Եթե Աբովյանից առաջ արևելահայ աշխարհաբար լեզուն գործնականում տարել էր իր հաղթանակը և առանց որևէ կոնկրետ ուղղութիւն ունենալու կազմավորվել էր տարերայնորեն, և լեզուն իր հասարակական ֆունկցիայով «գերազանցապես

¹ Տես՝ Գ. Սեվակ, «Արևելահայ գրական լեզվի պատմութեան պերիոդիզացիան», էջ 44:

գործնական-գործարարական էր, ապա այն սկսվում է տեսակա-
նորեն հիմնավորվել Արտվյանի ժամանակ և առաջին հերթին նրա
կողմից: Արտվյանը հանդիսանում է արևելահայ նոր գրական
լեզվի առաջին տեսաբանը: Նրան է պատկանում մեր լեզվի ա-
ռաջին տեսութայունը:

Արտվյանի լեզվական հայացքները, իհարկե, անհնար է
տնջատել նրա գրական ստեղծագործություններից, ավելին՝ այն
չի կարելի բաժանել նրա ամբողջ գործունեությունից:

Արտվյանն ինքը լեզվական-տեսական առանձին ուսումնա-
սիրություն չի դրել և լեզվի մասին ունեցած իր հայացքներն
արտահայտել է գեղարվեստական գործերում «շեղումներ» կա-
տարելով համ նրանց առաջաբաններում և նամակներում: Վեր-
ջապես, առաջին անգամ նա է փորձել իր տեսական սկզբունքնե-
րը կիրառել ստեղծագործությունների մեջ: Անկասկած, Արտվյա-
նի լեզվական հայացքները այսօր էլ մեզ համար կարևոր նշա-
նակություն ունեն և անպայմանորեն ուշադրության արժանի
են:

Նոր լեզվի իրավունքների պաշտպանության համար Արտվ-
յանը առաջ է քաշել լեզվական բաղմամբիվ հարցեր և մեծ մա-
սին տվել ճիշտ ու, կարելի է ասել, դիտական հիմնավորում:

Ամենից առաջ, Արտվյանը ճիշտ է բացատրել լեզվի դերն
ու նշանակությունը ժողովրդի կյանքում: Լեզուն նրա համար
հանգիստանում էր ժողովրդի կուլտուրական վերածնության ան-
հրաժեշտ և ամենակարևոր գործոնը, որի միջոցով հասարակա-
կան համակենցությանը ապրող մարդիկ կարողանում են իրար
հաղորդել իրենց հոգեվիճակները, իրենց մտքերն ու զգացմունք-
ները: Եթե բանավոր լեզուն սահմանափակվում է դրանով, ապա
գրավոր լեզուն դրան ավելացնում է և մեկ ուրիշը—հետագա սե-
րունդներին այդ մտքերն ու զգացմունքները հաղորդելու կարե-
վորությունը: Իր այդ ճիշտ տեսակետները Արտվյանը արտա-
հայտել է «Նախաշավիղին» կցած գերմաներեն գրած ընդարձակ
առաջաբանում: Այդտեղ Արտվյանը գրում է.

«Լեզուն անշուշտ ամենաազնիվ գործիքն է, որի միջո-
ցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ
մարդկանց, առանց որի ոչ անհատը, ոչ էլ մանավանդ ժո-
ղովուրդը ի վիճակի չէ մտքերն ու զգացմունքները հաղոր-

գելու ուրիշներին; մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին»¹

Լեզուն, սակայն, Արուսյանի համար սոսկ «հասարակ» մշտնջեր ու զգացմունքներ հաղորդելու գործիք չէ, նա ինքնանպատակ մի բան չէ, նրա միջոցով արտահայտվում է ժողովրդի կյանքն ու կենցաղը, նրա կուլտուրան առհասարակ. ավելին. լեզվի մեջ ներկում է ազգի քաղաքական ու բարոյական կյանքը:

«Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցուանում է մի ազգի տոանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը»²

Լեզուն Արուսյանի համար պատմական կատեգորիա է, որը ենթակա է փոփոխության ու զարգացման: Ուրեմն, նա քարացած բան չէ, այլ մի պրոցես: Եվ լեզուն գոյանում ու զարգանում է իր ժողովրդի գոյացմանն ու զարգացմանը դուգընթաց: Երկրի—ժողովրդի տնտեսական ու քաղաքական վիճակը անպայմանորեն իր ազդեցությունն է թողնում ինչպես նրա ամբողջ իդեոլոգիայի, այնպես էլ լեզվի վրա: Ահա թե ինչպես է ձևակերպել իր միաքը նրան այդ առաջաբանի մեջ:

«Ինչպես առանձին անհատի մոտ տարիքի աճման դեպքում, այնպես էլ յուրաքանչյուր ժողովրդի մոտ նրա հոգևոր զարգացման աճման կամ նվազման հետ միասին լեզուն էլ բոլորովին այլ կերպարանք է ստանում: Ո՞վ կարող է ժխտել, որ մեր ամբողջ հոգեկան զարգացումը, ինչպես և մեր լեզուն գլխավորապես կախված են այն պայմաններից, որոնք մեզ վրա քաղաքական ազդեցություն են ունեցել»³

Արուսյանը լեզուն համարում է ժողովրդի սեփականությունը, ազգի գոյության ամենակարևոր նախապայմանը, առանց որի ազգը կորցնում է իր ինքնուրույնությունը և, մնալով կախյալ վիճակի մեջ, հնարավորություն չի ունենում անվթար պահել իր անցյալի կուլտուրան, հարկադրված ընդունում է իշխող պետության կենցաղը և վտանգի տակ դնում իր գոյությունը:

«Ախ՛ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ինչի՞ նման

¹ «Նախաշավիղ», Երևան, 1940 թ., էջ XXXIX:

² Անդ:

³ Անդ:

կըլի: Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա, —
զբուս է «Վերք Հայաստանի»-ի մեջ:¹

Հայտնի է, որ այս տողերը շատ դուր էին եկել մեծ դեմոկ-
րատ Միք. Նալբանդյանին: Ռեպուզիտն գեմեկրատը լեզվի մա-
սին իր ունեցած մաքերի հաստատման համար մեջ է բերում
Աբովյանի այդ խոսքերը: Նալբանդյանը նույնպես Աբովյանից
հետո մեծ կարևորութուն է ավել լեզվին, ասելով — «Ազդ կոչ-
վածը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզու, առանց որի չի կարող լինել
ազդ: Լեզուն ազգի ոգին է»:

Լեզվի դարգացման հարցը դնելով, Աբովյանը քննում է
«հին» ու «նոր» լեզուների խնդիրը, նրանց փոխհարաբերության
ու իրավունքների հարցը: Եվ այստեղ արդեն իր ամբողջ հասա-
կով ամուր ու հաստատ կանգնում է մեր առաջ մեծ լուսավորիչը:

Աբովյանը լեզվի մասին խոսել և լեզվական հարցեր առաջ
է քաշել իր բոլոր ստեղծագործությունների մեջ: Դրանով նա
նպատակ է ունեցել, որ ժամանակի լեզվական խնդիրներին ար-
ձագանքեն բոլորը, մասնակցեն գիտուններն ու ժողովուրդը: Նա
համոզված էր, որ աշխարհաբար լեզուն այլ ճանապարհով քա-
ղաքացիութուն ստանալ չէր կարող, որ դրաբարի դեմ պայ-
քարը պետք է գառնա ոչ թե անհատների, այլ համընդհանուր
մի գործ:

«Հին» ու «նոր» լեզուների հարցը դնելով, Աբովյանը իրեն
նետում է մի գու պայքարի մեջ: Այդ մեր հին լեզվի (գրաբա-
րի) և նոր լեզվի (աշխարհաբարի), երկու հակառակորդ բանակ-
ների համառ ու տեակաւ պայքարն էր, որը հայտնի է «գրա-
պայքար» անունով:

Որպեսզի ավելի պարզած լինենք Աբովյանի կատարած դերն
ու նշանակութունն այդ գոտեմարտում և նրա մեծությունը,
անհրաժեշտ է, թեկուզ համառոտակի, ներկայացնել այդ պայ-
քարի սրությունը, աշխարհաբարի կողմնակիցների և հակառա-
կորդների միջև եղած սուր վեճը:

Հայտնի լեզվաբան Ա. Այտընյանը գրել է, թե դրաբարի
պաշտպանները կրքոտ պնդում էին.

«Աշխարհաբարը մեր լեզուն չէ, օտարոտի է, խորթ է,
աղավաղութուն է, գիտության և դժբախտության ծնունդ
է, գաղթականությանց արդյունք է, ժամանակիս միակ

¹ «Վերք Հայաստանի», էջ 80:

ազգային լեզուն չէ, տկար ու տգեղ է, անշուք, աղքատ, և միով բանով՝ սև բիծ մըն է հին ազգի մը ճակատին վրա»¹ Խոսելով գրաբարյանների մասին, նույն բանն է ասել նաև Ստ. Պալասյանը, ասելով՝ գրաբարյանները համառորեն պընդում էին, թե՛ «աշխարհաբարը աղավաղություն է, օտարություն է, ասակական մտքի ծնունդ է, աշխարհաբարի գոյությունը գրաբարի վերածնության արգելք է»²

Պակաս համառությամբ չէին կռվում նաև աշխարհաբարի կողմնակիցները

«Գրաբարը հին կյանքի թարգմանը լինելով՝ իր պարտքը վաղուց կատարեց. նոր ժողովուրդը չէ կարող հին ու մեռած լեզվով վարվիլ... հին հայերենին պետք է հաջորդի նորը, եթե չենք կամենում ժամանակի բնական ընթացքին հակառակ ուղղությունով գնալ»³

Աշխարհաբար լեզվի կողմնակիցների և հակառակորդների պայքարը այդպիսի սրության հասավ, իհարկե, Աբովյանից հետո, բայց չմոռանանք, որ այդ պայքարն սկսվեց Աբովյանի ժամանակ և հենց առաջին անգամ նրա կողմից, մյուս կողմից էլ՝ խաղաղություն չէր տիրում և Աբովյանի ժամանակ։ Բավական է հիշել հոգևորականության հալածանքն ու հետապնդումը գրաբարի դեմ նրա սկսած պայքարի պատճառով, «ասակական» լեզուն հովանավորելու համար։

Այժմ տեսնենք, թե ինչպիսի էր հիմնավորում Աբովյանը գրաբարի վերացման հարցը։

Մեենից առաջ ասենք, որ գրաբարի դեմ հետևողականորեն պայքարելով, Աբովյանը դնում էր լեզվական կուլտուրայի պահանջ։ Հայ մեծ լուսավորչի սկզբունքն այն էր, թե երբ ժողովուրդը լեզուն չի հասկանում, այդ լեզվով չի խոսում, այդպիսի լեզուն, ինչքան էլ ճոխ ու հարուստ լինի, լավ անցյալ ունենա, միևնույն է—նա իրական արժեք չի կարող ունենալ, նա ազգի համար կոնկրետ որևէ արժեք չունի և նրա արժեքը սոսկ պատմական է։

«Ախր որ ազգը էն լեզվովը չի խոսում, էն լեզուն չի

¹ Սյուրյան, «Քննական տեսությունները հայերեն լեզվի», Վիեննա, 1866 թ., էջ 251։

² Ստ. Պալասյան, «Ընդհանուր տեսություն Արևելյան նոր գրավոր լեզվի հայաց», Թիֆլիս, 1870 թ., էջ 1։

³ Անդ։

հասկանում, ստքի հենց բերնիցն էլ սոկի վեր ածիր. ո՞ւմ պետք է ասես», — գրում է Աբովյանը իր հանրահայտների Առաջաբանում»:

Գրաբարի ամենամեծ թերությունը Աբովյանը համարում էր այն, որ նա ժողովրդի համար մնում էր անհասկանալի ու անմատչելի: Նա մտածում էր ծառայել իր ժողովրդին, դրել, խոսել ու գործել նրա համար, սակայն «նա համար դրեմ, որ աղվը լեզուս չի հասկանալ: Թեկուզ ուներեն, նեմեցերեն, յա ֆռանցուղերեն գրած, թեկուզ գրաբար՝ տասը կրկի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քառու ջաղաց»²

Աբովյանը բոլորովին էլ չէր թերահաճատում գրաբարը և երբեք էլ մոռացության չէր տալիս նրա արժանիքները: Նա ընդունում էր, որ գրաբարը նույնպես մեր լեզուն է, որ զարեբի ընթացքում մշակվել, ճոխացել է, և կուտուրական նվազ արժեք չունի:

«Մեր գրաբար լեզուն անդին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ որ դիտեմ, մեկն էլ է՛ն համը, է՛ն քաղցրությունը, է՛ն ճոխությունը չունի, սակայն մեր վատ բախտից՝ հազարից մեկը չի հասկանում, ինչ պետք է արած»³

Աբովյանը մեկ ուրիշ տեղ հարեանցիորեն ակնարկ նետելով գրաբարի պատմության վրա, կասկածի տակ է առնում նրա մատչելիությունն ու գործածությունը նույնիսկ անցյալում, կարծես պատահականությամբ հետագա ուսումնասիրողների այն պնդմանը, թե «գրաբարը մի ժամանակ եղել է խոսակցական լեզու»⁴. Անկարելի աս, թե մեր երանելի թարգմանչաց ժամանակին՝ հայք էն լեզուն էին ըլում խոսելիս, որ նրանք գրեցին»⁵

Գրաբարն Աբովյանին չէր ոգևորում, ընդհակառակը՝ «նոր էի իմանում, — գրում է «Վերջի» առաջաբանում, — որ գրաբար ու ուրիշ լեզվերն են մինչև է՛ն սրածը միտքս փակել, բխովել էիմ» (ընդգծվածը մերն է — Ա. Գ.): Նույն այդ միտքը Աբովյանը հայտնել է իր «Նախաշավդի» գերմաներեն առաջաբանում, ավելացնելով, թե գրաբարն է եղել պատճառը, որ ժողովուրդը մնացել է անգիտ:

¹ «Վերջ հայտատանի», էջ 8:

² Անդ:

³ Խաչատուր Աբովյանի երկերը, Մոսկվա, 1897 թ., էջ 1:

⁴ Պետական գրական թանգարան, Աբովյանի արխիվ, գործ № 13, էջ 108:

«Որքան էլ հին հայերեն լեզուն իր արտակարգ հարստութեան, իր կատարելութեան և իր գրական արժեքի կողմից թարձր լինի, այնուամենայնիւ այդ լեզուն է միակ արգելակող պատճառը, որ խեղճ ժողովուրդը մինչև հիմա զուրկ է մնացել զարգացման միջոցներից»¹

Այսպիսով, նա գրաբարը համարում է ոչ միայն լեզվի, այլև առհասարակ ժողովրդի զարգացումը արգելակող մի չարիք:

Արուսյանը գրաբարի հաշիւները փակում էր նաև մեկ ուրիշ հիմնավոր բացատրութեամբ: Նա գտնում էր, որ երբ ժամանակը փոխվում է, նրան համապատասխան պետք է փոխվի նաև լեզուն, որ նոր կյանքի պահանջներին չի կարող բավարարել հին լեզուն իր կառուցվածքով ու ձևերով: Նկատի ունենալով լուսավորչալ ազգերի պատմութունը, Արուսյանը գրում է.

«Նա էլ լավ գիտի, որ ինչ երևելի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզու ունեն, հիմ ու նոր» (ընդգծումը հեղինակինն է—Ա. Ք.), և իր այդ միտքը կոնկրետ փաստերով հաստատելու համար, Արուսյանը մեկ ուրիշ տեղ տալիս է ուրիշ լեզուների փոփոխութեանները՝ տնտեսական-քաղաքական կյանքի փոփոխութեան ընթացքին համապատասխան:

«Հույները, նման անհրաժեշտութեան հետևանքով,—գրում է Արուսյանը,—թողել են իրենց գեղեցիկ հին լեզուն: Իտալացիք այդպիսի ուժ ունեցող լատիներենը փոխարինեցին իտալերենով: Այդքան շատ տարածված և դարեր շարունակ որպես կրթական լեզու դորժածված սլավոններենը հարկադրված էր տեղի տալ ժամանակի ոգուն և պահանջին:

Միթե՞ միայն հայերը պետք է մյուս ազգերից հետ մնան և թողնվեն հոգեկան խավարի այդպիսի ստրկական կապանքների մեջ»²

Ուրեմն, նոր լեզվի դատը պաշտպանելով, նա իր տեսակետները հաստատում և հիմնավորում էր նաև ուրիշ ազգերի օրինակներով: Նա առաջարկում էր հետևել լուսավորչալ այդ ազգերի պրակտիկ օրինակին, նրանց փորձին, որոնք լավ արդյունք և հետևանք են տվել:

Ինչպես տեսնում ենք, Արուսյանը դժոկբարտական դիրքերից և գիտական հիմնավորումով գրաբարը համարում էր իր

¹ «Նախաշավիղ», էջ XLI:

² «Նախաշավիղ», էջ XLIX:

դարն ապրած: Արուվյանը գտնում էր, որ չուրաքանչյուր լեզու հաշկադրված է լինում տեղի տալ ժամանակի ոգուն և պահանջին» — սա լեզվական-փոխառության մի չափադանց առողջ ընդհանրացում է, հին լեզուն փոփոխելու և այդ փոփոխությունը հիմնավորելու ժառանգելիք միայն մոտ ըմբռնում:

Արուվյանը բացատրում է նաև զբաղաբեր խրթին լինելու պատճառը: Նա գրում էր, որ «Դրքի լեզուն մնացել է որպես սեփականություն հոգևորականության, որը — ինչպես նրա զստակիցները մյուս ազգերի մոտ — սկսեց այդ լեզուն էզոթատորեն դարձնել եզիպտական դադանիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի զիրք ու ակնածություն ձևոք բերի»¹

Արուվյանը սակայն չի բավարարվում հին լեզուն՝ զբաղաբեր քննադատելով: Նա միաժամանակ տալիս է նոր լեզվին՝ աշխարհաբարին անցնելու, այն միասնական դարձնելու ուղիները, նոր լեզվի առավելություններն ու անհրաժեշտությունը:

Արուվյանը գտնում էր, որ նոր լեզուն արդեն կա, գոյություն ունի, սակայն նա «անպատիվ է», այսինքն՝ հարգի չարժանացած, դեռևս ոչ մասնայական:

Աշխարհաբար լեզվի գոյությունը նույն այդ ժամանակ հաստատել է նաև Ստ. Նազարյանը, 1858 թվին գրած «Հայկական լեզվի խորհուրդին» մեջ, գրելով՝ «Հայոց լեզու ասելով իմանում ենք միայն աշխարհաբար լեզուն, որ կյանք ունի մեր ժամանակումը...»²

Արուվյանը հիմնավորում էր նոր լեզվի առավելությունները և նրա անհրաժեշտությունը, քննության ենթարկելով նրա լեզվական կառուցվածքը, համեմատելով զբաղաբարի ու նրա կազմության հետ: Նա ամբողջապես չէր մերժում զբաղաբարի օգտակարությունն ու օգտագործումը նոր լեզվի մշակման համար, միայն թե՛ նոր լեզուն ընտրությամբ օգտագործելը զբաղաբարյան բառերն ու ձևերը, միշտ նկատի ունենալով դրանց անհրաժեշտությունն ու մատչելիությունը:

Նոր հայերենը զբաղաբարի հանդեպ ոչ միայն այն առավելությունն ունի, որ նա կենդանի ապրում է ժողովրդի բերնում, այլև այն, որ նրա քերականությունը վերին աստիճանի հեշտ է: Նա ունի, չնչին բացառությամբ, միայն

¹ «Նախադրեղ», էջ XLII:

² Ստ. Նազարյանի երկերը, հ. I, Թիֆլիս, 1913 թ., էջ 6:

մի խոնարհում և մի հոլովում, մինչդեռ գրաբարը բազմաթիվ հոլովական ու խոնարհման ձևեր ունի»։ «Հին և նոր լեզուների գլխավոր տարբերությունը,— շարունակում է Արուսյանը,— թեքման և շարահյուսութեան մեջ է։ Գրաբարում, ինչպես և բոլոր նոր եվրոպական լեզուներում, որոշիչները, հատկացուցիչները, բացահայտիչները գրվում են որոշյալներից, հատկացյալներից և բացահայտիչներից հետո, իսկ նախդիրները՝ առաջ, մինչդեռ նոր հայերենում — թաթարերենի նման — հակառակն է»¹։

Եվ Արուսյանը, այնուհետև, աշխարհաբար նոր լեզվի մշակման, լեզվալինություն մի ամբողջ ծրագիր էր առաջադրում՝ «նոր հայերեն մտցնել այժմյան դպրոցական հիմնարկները», ըստ դասագրքերն ու դրականությունը փոխել նոր լեզվով, աստիճանաբար մաքրել լեզուն օտար լեզուների անտեղի ազդեցություններից, գրաբարից և օտար լեզուներից փոխ առնել միայն անհրաժեշտության և կարիքի դեպքում, զգացվի «հայրաբար հոգացող իշխանություն» հսկողությունը և այլն։ Եվ Արուսյանը այդ նպատակով առաջինը փորձ է անում՝ կազմելով տարրական դպրոցների համար լեզվի դասագիրք, որը հայտնի է «Նախաշավիղ» անունով, այնուհետև գրում է գեղարվեստական ծավալուն գործեր, հրապարակախոսական հոդվածներ և այլն։ Արուսյանը հեռատես էր։ Նա համոզված էր, որ նոր ոտքի ելած աշխարհաբարի քայլերը դեռևս հաստատուն չեն, որ նա դեռևս թոթովախոս մի մանուկ է, «կմկմացող» մի երեխա, բայց կգա ժամանակ, երբ նա կքայլի հաստատուն, կդառնա տրամաբանության ու ճարտասանության պահանջներին բավարարող մի «խրթին» լեզու։

Աշխարհաբար լեզվի հաղթանակի համար նրա մղած պայքարը սովորական փոփոխությունն առաջ բերելու համար մղվող պայքար չէր և ոչ էլ «նորարարության ձգտում», ինչպես ասում է ինքը, այլև ունեի սոցիալ-քաղաքական մեծ նշանակություն։ Այդ պայքար էր նոր մտածողության համար, նոր ընդհանրականության համար և, վերջապես, իր ազգի գոյությունը պահպանելու համար։

Արուսյանը մեծ ցավով, բայց ամենայն ճշտությամբ է ներկայացրել այն ժամանակվա դպրոցների ողորմելի վիճակը։ Դեմ

¹ «Նախաշավիղ», էջ XLIV—XLV։

արտահայտվելով գորոցներում իշխող այն ժամանակվա դատախազության ու կրթության սխոլաստիկ ձևերին, Արովյանը առանձնապես սրում էր լեզվի հարցը՝ «Ո՞րն է հայտնի չէ,— գրում է Արովյանը,— թե զրաբար լեզուն որքան է օտարացել հասարակ գործածական լեզվից և քանի՞ տարիներ են հարկավոր նրա կանոնները լիովին իմանալու համար: Այնքան ժամանակ տանջվում են ողորմելի ժանուկները, որ գորոցը նրանց տանջարան է թվում, ուսումը՝ տանջանք և սոսկալի պատիժ, և այս բոլորի պատճառը լեզվի անհասկանալի լինելն է»:

Արովյանը դեմ է արտահայտվել նաև լեզվի ինքնապատասխան ուսուցմանը՝ նրա համար լեզուն պետք է ունենա գործնական նպատակ: Լեզուն պետք է նպաստի «ուրիշ շատ առարկաներ» սովորելուն, որ այդ լեզվով պետք է «գրել և մշակել» ոչ թե «այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի ոգու հետ», այլև «սրտի բաներ», այնպիսի բաներ, որ «ամբողջ սիրտ կարող է գրավել»:

Այստեղ, ի միջի այլոց, պետք է հիշենք, որ Նալբանդյանը ևս այդ կարծիքին է եղել, երբ ասել է թող հայոց մանուկը սովորի յուր մայրենի լեզվովը ազատական գիտությունները, «նորան» (—հայ մանուկին) հարկավոր է գիտություն, որը կարող է ստանալ նոր լեզվի միջնորդությունով:

Այսպիսի հարց դնելով, Արովյանը առաջ է քաշել մի չափադանց խոշոր և կարևոր հարց՝ լեզվի (= ձևի) և դրա միջոցով արտահայտվող մտքի (= բովանդակության) փոխարարելություն հարցը: Նրա համոզմունքով այդ երկուսն էլ պետք է համապատասխանեն իրար և առանց մեկի մյուսը կարևորություն չունի: Այլ կերպ ասած՝ լեզուն իր ձևով, կազմությամբ ու մատչելիությամբ ինչքան էլ կատարյալ լինի, հետաքրքիր և ընդունելի չի դառնա, եթե նրանով վերարտադրվի վերացական հասկացություններ, «ժողովրդի սրտի չուզած բաներ», իսկ «սրտի ուզած բաներ» ասելով Արովյանը հասկանում էր՝ «սեր, բարեկամություն, հայրենասիրություն, ծնող, զավակ, մահ, կռիվ» և այլն: Կարճ ասած՝ Արովյանը պահանջում էր լեզվով արտահայտել կյանքը:

Այս հարցը, ինչպես տեսնում ենք, ունի նաև տեսական նշանակություն:

Արովյանը գտնում էր, որ լեզուն պետք է ծառայի ժողովրդին, արտահայտի նրա շահերն ու ցանկությունները, որ լե-

դռնն չպետք է դռն դառնա առանձին անհատների քմահաճույքներին և իր նյութերի ընտրութեամբ միշտ հազվի առնի ազգի (իսկ ազգ քսելով Արուսեանը հասկանում էր ժողովուրդը) պահանջները: Թերեա այդ է եղել պատճառներից մեկը, որ Արուսեանը այնքան սիրով է վերաբերվել դեպի ֆուլկուրը, ժողովրդական բանաստեղծութեանը:

Արուսեանն իր ժողովրդի հետ ցանկացել է լեզուն չդարձնել շահագործողների սեփականութեան, չծառայեցնել նրանց շահերին, ինչպիսին եղել է գրաբարը, որի միջոցով ճերմակ ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանութեանը:¹

Արուսեանը մեր հասկացողութեամբ լեզվի դասակարգայնութեանը, իհարկե, չհասավ, բայց նա լեզվական հարցերում իշխողների և ժողովրդի շահերն ու ձգտումները հակադրելով՝ օրեկտիվորեն հանդես այդ գաղափարին:

Արուսեանի լեզվական հայացքների մեջ մի հարց ևս ուշադրութեան արժանի է: Նա առաջինը փորձեց մեր ազգային լեզվի դիտակցական մշակումը, լեզուն միօրինակ դարձնելու համար մշակման ուղիների որոնումը:

Ինչպես հայտնի է, արևելահայ աշխարհաբարը կազմավորվում և ձևավորվում է մի աշխարհի ժամանակաշրջանում, երբ հայ հասարակական կյանքում իբրև պատրաստի լեզուներ արդեն կային գրաբարը, միջին հայերենը և ժողովրդական բաղմաթիվ բարբառները: Նոր լեզվի մշակման խնդրում Արուսեանը նկատի է ունեցել այդ բոլորն էլ, որոնք կարող էին առատորեն նյութ, լեզվական ձևեր ու օրինակներ տալ:

Դրաբարի օգտագործման հարցում, 'ասացինք, թե Արուսեանը մերժողական դիրք չի բռնել, նրա կարծիքով նոր լեզուն մշակելիս անհրաժեշտաբար պետք է օգտագործել նաև գրաբարը: Նա չի մերժել գրաբարի օժանդակ դերը լեզվաշինութեան համար: Արուսեանը հենց այդպես էլ ասում է— «լեզվին այնպիսի հաստատուն ձև տալ, որ գրաբարից շատ չչեղվի»:²

Այս ասածից, իհարկե, չի կարելի հասկանալ, թե Արուսեանը Նազարյանի նման է մոտեցել, որի կարծիքով պետք է «ոտքը պահել միշտ նախնական (գրաբարի) հիմքի վրա և գրա-

¹ «Նախաշավիղ», էջ XLII.

² «Նախաշավիղ», էջ XIV.

կան լեզուն իր «պահասութեանքը օր ավուր լցուցանե հին լեզ-
վի նոսր դանձարանից»:¹

Ոչ, Այստեղ խոսքը վերաբերում է գրաբարից բոլորովին
չլեզվելուն, այսինքն՝ գրաբարն իբրև նոր լեզվի մշակման ու
հարստացման աղբյուր օգտագործելուն: Եվ այդ օգտագործումը
նրա կարծիքով պետք է լինի ընտրութեամբ և չափավոր, այ-
սինքն այնպես, «որ հասարակ մարդու համար խոյ հասկանալի
մնա»: Մյուս կողմից էլ, չի կարելի մոռանալ, որ Արուսյանը
այդպիսի արտահայտել է ժիշտոյ դասավանդման սովորութեանը
շատ գնով չզննելու և իր հակառակորդներին շատ չվշտացնելու
համար:

Արուսյանը այդպիսի կարծիք է ունեցել նաև օտար լեզու-
ների մասին: Նրա համար տառնձնուպես սուսաց հզոր լեզուն
և օտար լեզուները հանգիստցել են օժանդակ աղբյուրներ,
որոնցից պետք է վերցնել այնպիսի բառեր ու ոճեր, որոնք
չկան մեր նոր լեզվի մեջ և դառցվում է գրանց կարիքը: Արու-
սյանը, սակայն, այստեղ էլ որոշ չափ է սահմանել և զգուշաց-
րել ծայրահեղ վերաբերմունքից:

Ինչ վերաբերում է բարբառի օգտագործման հարցին, ապա
Արուսյանը դրան տվել է մեծ կարևորութիւն: Նրա նպատակը
եղել է ծառայել իր ժողովրդին, գրել միմիայն նրա համար,
այնպես գրել, որ ամենահետին դյուզադին անգամ կարդալուց
կարողանա բան հասկանալ: Եվ Արուսյանն այս նկատի ունենա-
լով՝ իրեն զգալի կերպով ավել է ազատութեան: Բարբառից ա-
մեն տեսակի ընտրութիւն կատարելը նա խթանել է, միայն
թե ժողովուրդը գրանով ավելի հեշտութեամբ հասկանա, նույն-
իսկ այն դեպքում, երբ այդ ձևերը գրական լեզվի ոգուն համա-
մապատասխան չեն: Ճիշտ է, որ Արուսյանը «Վերքի» հիմքում
դնելով բարբառը, այն նույնութեամբ չի օգտագործել և ընտրա-
ծը անց է կացրել իր լեզվաշինութեան մաղով, նրան տվել է
արմատի կնիք, սակայն ճիշտ է նաև այն, որ Արուսյանը
այն չի կատարել հետևողականորեն: «Վերքն» իր լեզվով բար-
բառ չէ, ինչպես կարծում են ոմանք, և ոչ էլ այն կարելի է հա-
մարել գրական, ինչպես պնդում են ուրիշները: Բարբառային
լեզվական տարրերը, ճիշտ է, նվազ չափի հասած, բայց առկա
է նաև «նախաշավիղում»:

¹ «Հյուսիսային», 1850 թ. № 1, էջ 34:

² «Նախաշավիղ», էջ XIV:

Աբովյանը որոնում էր մեր լեզվի մշակման ուղին և գրա-
նում էր, որ այն պետք է մշակել ի հաշիվ բարբառային ձևերի
աղաատ և առատ ընտրութեան: Անտարակույս, նա բարբառին
շատ ավելի է տեղ տվել, քան հարկավոր էր: «Նախաշավիղը»
գրելուց հետո քննութեան է ենթարկվել Թիֆլիսի Գիմնազիայի
մասնավարժական խորհրդում, որտեղ, ինչպես հայտնի է, տեղ-
գենցիոզ կերպով մերժել են, որակելով «պիտանի չէ»: Որ այդ
գրքի հասցեին ուղղած մեղադրանքները, ինչպես գիմնազիայի
հայոց լեզվի ուսուցիչ Արարատյանի, այնպես էլ խորհրդի կող-
մից, գուրկ էին ճշմարտութեանից և ավելորդ մեղադրանքներ
էին, այդ հայտնի է: Բայց այստեղ մենք չենք կարող անուշա-
գրութեան մատնել մի դիտողութիւն, որ արել էր Արարատյա-
նը և որը, մեր կարծիքով, գուրկ չէ ճշմարտութեանից: Այդ աշ-
խատութեան լեզուն է, որ «հորինված է ոչ մաքուր հայերեն
լեզվով, այլ Նրեանի բարբառով»: Արդո՞ք այստեղ «մաքուր հա-
յերեն լեզու» ասելով պետք է հասկանանք, թե խոսքը վերա-
բերում է գրաբարին: Մեր կարծիքով՝ ոչ: Մեր կարծիքը հաստա-
տում է այն փաստը, որ Արարատյանը կոնկրետ կերպով հիշում
է այդ թերութիւնը, որ Աբովյանը իր գրքի մեջ «օժանդակ է
բայի փոխարեն գործ է ածել ա», որը բարբառային բառերի գոր-
ծածութեան համեմատութեամբ ավելի է զգալ տալիս լեզվի բար-
բառայնութիւնը: Խնդիրն այն է, որ Աբովյանից առաջ գրված
բաղժաթիվ աշխատութիւնների մեջ օժանդակ է բայի գործա-
ծութիւնը շատ տարածված էր, և Արարատյանը այդ նկատի ու-
նենալով է, որ նման դիտողութիւն է արել:

Աբովյանի բոլոր գործերի մեջ նույնպես օժանդակ ա բային
(բարբառային ձև) զուգահեռ գործածված են նաև ե (գրական
ձև), սակայն կասկածի ենթակա չէ, որ բոլորի մեջ էլ նախա-
պատմութիւնը տվել է առաջինին և ավելի շատ գործ է ածել
ա-ն, որը Արարատյան բարբառում նույնպէս ավելի տարա-
ծում ունենր:

Մի կողմը թողնենք այն հանգամանքը, որ Աբովյանը
գրական լեզվի մշակման խնդրում բարբառներին շատ ավելի
մեծ տեղ էր հատկացրել, քան հարկավոր էր, քանի որ նրա
կարծիքով դրանով երկը պիտի դառնար ավելի մատչելի, բոլո-
րին հասկանալի: Այս կարծիքն, իհարկե, ճիշտ է, եթե նկատի
ունենանք Արարատյան բարբառով խոսողներին: Սակայն մեզ
համար այստեղ կարևոր է մեկ ուրիշ բան:

Արտվյանը գիտեր հայերենի մի քանի բարբառներ, ինչպես՝ Մշո, Թիֆլիսի, Ղարաբաղի և այլն, որոնք և այս կամ այն չափով օգտագործված են իր ստեղծագործությունների մեջ։ Բայց Արտվյանը այդ բոլորի մեջ շեշտը դրել է Արարատյան բարբառի վրա, այն համարելով գրական լեզվի համար բոլորից հարմարն ու անհրաժեշտը։ Սա խսկապես կարևոր հարց է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նրանից հետո Պատկանյանը շատ ավելի կարևորություն էր տալիս Նախիջևանի բարբառին և ձգտում էր լեզուն մշակել այդ բարբառի ուղեն համապատասխան։ Արտվյանը ունի լեզվական ճաշակ և հմտություն։ Նա գիտեր, որ Արարատյան բարբառն իր կոտուցվածքով ունի շատ ավելի մեծ առավելություններ և մյուս բարբառներին ավելի նման լինելով հանդերձ՝ ունի գրական դառնալու մեծ ավյալներ։ Ինչպես հայտնի է, հետագա պատմությունը հաստատեց Արտվյանի կանխատեսումը։ Արարատյան բարբառը դարձավ գրական լեզվի հիմքը և համեմատաբար կարճ ժամանակում դարձավ ընդհանրական և այդ այն պատճառով, որ՝ ճինչյունների կողմից, զբաղարի նկատմամբ, մեր բարբառների մեջ ամենից քիչ է փոփոխության ենթարկվել գրական լեզվի մայր՝ Այրարատյան բարբառը։ Այստեղ բառերը մեծ մասամբ պահում են հին գրական լեզվի կերպարանքը։¹

Անկասկած, այս հանգամանքը հաշվի է առել Արտվյանը, երբ նախապատվությունը տվել է այդ բարբառին։ Իհարկե, մենք չենք անտեսում նաև այն, որ գրական լեզուն արդեն կազմավորված, հայտնի է եղել Արտվյանին, որն իր հիմքում ընդունած է եղել Արարատյան բարբառը։ Արտվյանը այլ հեղինակների նման լեզվի մշակումը քարշ չտվեց դեպի ուրիշ բարբառ, այլ զգաց, որ այդ բարբառը գրական դառնալու ճանապարհին արդարացրել է իրեն և որ նոր լեզուն իր մշակման պրոցեսում էլ պետք է շարունակի նրանից շատ բան վերցնել։

Արտվյանը, սակայն, գրանով չէր մերժում հայերեն մյուս բարբառների օգտագործումը լեզվաշինության ընդհանուր պրոցեսում։ Արտվյանն ինքը երբեմն վերցրել է բառեր ու ձևեր Թիֆլիսի, Մշո, Ղարաբաղի և այլ բարբառներից։

Արտվյանը առանձին ուժով գրել է լեզվի մաքրության, հստակության հարցը և սկզբունքով դեմ է արտահայտվել լեզվի

¹ Մ. Արեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1931 թ., էջ 62.

խնդումանր: Արովյանը մեծ վշտով և դառնությամբ է հիշել մեր լեզվի այն ժամանակվա վիճակը:

Ահա թե ինչ է գրել «Նախաշավիղին» կցած իր բացատրականում:

«Սակավաթիվ ընտանիքներ, որ բարերաստիկ կերպով հայրենիքից հեռացել են, փոխարինում են իրենց կենցաղն ու լեզուն այն ժողովրդի կենցաղով ու լեզվով, որոնց մոտ ապրում են: Նրանք բոլորովին մոռացել են իրենց մայրենի լեզուն, ինչպես այդ տեսնում ենք Լեհաստանում և Թյուրքիայում, անգամ այստեղ՝ Վրաստանում:

Ժողովրդի մեծագույն մասը, որ մնացել է Հայաստանում, դարեր շարունակ թյուրքական ժողովուրդների ազդեցության տակ լինելու և արտաքին ճնշման տակ կռացած լինելու, ուրեմն և ամենատարրական իմացություններից զրկված լինելու հետևանքով՝ կենցաղի և տարազի հետ միասին ընդունել է նաև նրանց լեզվի կառուցվածքը: Այդպիսով, առաջ է եկել մի բոլորովին ուրիշ բարբառ, որ ինչպես իր կազմով, այնպես էլ իր ձևով բոլորովին տարբեր է հնից և ամեն բանում նման է թաթարականին: Սովորական խոսակցության ժամանակ ժողովրդի բերանից լսում ես ոչ միայն թյուրքերեն բառեր, այլ ամբողջ նախադասություններ ու դարձվածքներ¹:

Որ օտար երկրներում օթևան գտնող հայերը մոռանում էին իրենց լեզուն, այդ, իհարկե, ճիշտ է:

Ճիշտ է նաև այն, որ Հայաստանում ապրող հայերի մայրենի լեզվի մեջ մտել էին օտար լեզուներից և առաջին հերթին թյուրքերենից բազմաթիվ բառեր ու արտահայտություններ, սակայն Արովյանը ճիշտ չէր մեկ ուրիշ հարցում, երբ կարծում էր, թե հայերեն բարբառներն ու աշխարհագրը, կրելով թյուրքերենի ազդեցությունը, իրենց լեզվական սիստեմները փոխել են այդ լեզվի սիստեմին համապատասխան:

Այս բանը նրանից հետո երկար ժամանակ օգտագործեցին առանձին ուսումնասիրողներ, որոնց թվում և լեզվաբաններ, և ռիսալ ու անհիմն կերպով պնդեցին, թե իբր մեր լեզուն իր շաբադյուսությամբ, շարադասությամբ ու իր կառուցվածքով ժա-

¹ Նախաշավիղի, էջ XLI—XLII:

մանակի ընթացքում հեռացել է գրաբարից, և իբր թե թյուրքերենի դարավոր ազդեցության հետեանքով «թյուրքացի»:

Մեր լեզվի սխտեմը թեև կցական է, թյուրքերենի նման, և շարադասությամբ էլ նրան մոտ, այնուամենայնիվ թյուրքերենի ազդեցությամբ չէ, որ ձևոք է բերել այդ սխտեմը:

Մեր ժողովրդական բարբառները և նրանց հիմքի վրա բարձրացած աշխարհիկ գրական բարբառները, ի սկզբանե եղել են կցական և հենց գրանով էլ միշտ հակադրվել են գրաբարին, որը, ինչպես ասել ենք, թեքական տիպի լեզու է:

Աշխարհի բոլոր լեզուներն էլ եղել են և են կամ կցական կամ թեքական, կամ խառն տիպի, բայց բոլորովին էլ չի նշանակում, թե մեկի սխտեմը գալիս է մեկ ուրիշ լեզվից, կամ մեկն իր սխտեմը փոխ է առել մյուսից:

Գիտական լեզվաբանության մատերիալիստական ըմբռնման բացակայության դեպքում եթե Աբովյանը նման անհիմն ենթադրություն է արել, այդ իհարկե հասկանալի է: Բայց բանն այն է, որ նույնիսկ քսաներորդ դարում այդ կարծիքին էին որոշ լեզվաբաններ: Աբովյանը սակայն այդ կարծիքը ունենալով հանդերձ՝ մեծ կրքոտությամբ պաշտպանում է նոր լեզուն—աշխարհաբարը, տեսականորեն հիմնավորում նրա անհրաժեշտությունը, իսկ սա մեզ համար չափազանց կարևոր նշանակություն ունի, հենց առաջին հերթին նրան՝ Աբովյանին շատ բարձր գնահատելու համար: Աբովյանը իր «Նախաշավիղը» գրում է այդ լեզվով, բանի տեղ չգնելով իր դեմ սպառնելիք մեղադրանքները, քանի որ, ինչպես ինքն էր ասում համոզված կերպով, «... եվ յոյս իմ հաստատունն է՝ թէ ձեռնարկութիւն իմ այս որքան նորաձև և տարօրինակ իմն երևեսցի, սիրելի այնուամենայնիւ լիցի այնոցիք, որոց վասն պատրաստեցան»:¹

«Վերք Հայաստանի» վեպի մեջ Աբովյանը լեզվի անտեղի խնդման, ավելորդ փոխառությունների դեմ է արտահայտվել ռուսաց լեզվի մասին խոսելու առիթով:

Աբովյանը գտնում էր, որ եթե, ինչպես եվրոպացիք են ասում, հայ ժողովուրդը «այժմ» (=Աբովյանի ժամանակ) ոչ մի բանաստեղծ չի կարող ցույց տալ, ապա դրա պատճառը նախ և առաջ մեր լեզվի այդ վիճակն է:

¹ «Նախաշավիղ», էջ LXXXIII: Տես նաև՝ Գիտական դրական թանգարան, Աբովյանի արխիվ, գործ № 24, էջ 7:

Թյուրքերենի ազդեցությունը այնքան ուժեղ է եղել, որ նույնիսկ շատ անվանի հայ գրողներ գրել են այդ լեզվով, և օրինակ է բերում Քեչիշօղլի (քահանայի տղա), Ալլահվերդի (Աստվածատուր), որոնք «հանճարներ են եղել»:

Բժաթարները,—գրում է Աբուլյանը,—հիանում են դժբանք բանաստեղծությունների և երգերի գեղեցկությամբ, մինչդեռ դրանք հայ են եղել»¹

Օտար լեզուների այդպիսի ազդեցությունը վտանգի տակ էր գնում մայրենի լեզվի գոյությունը և հայերենը այդ ճանապարհով գնում էր գնալի վերացում: Ի՞նչն էր դրա պատճառը, ինչպե՞ս Թյուրքերենը կարողանում էր հեղեղի պես տարածվել Հայաստանում և ասպարեզից հանել հայերենը:

Այս հարցերն առաջադրելով Աբուլյանը, հենց ինքն էլ պատասխանում է.

«Եվ երբ մի ժողովուրդ դժբախտություն է ունենում իր երկիրն ու ինքնուրույնությունը կորցնելու և իրեն իր սեփական հայրենիքում որպես ստրուկ դառնալ, իսկ այս ավելին է ասում, քան այդ ամենը,—այլևս կարձի է նա ի վիճակի լինել մտահոգվելու նրանով, որ զբաղվի գրականությամբ ու գիտությամբ, չէ՞ որ դրա համար անհրաժեշտ է, որպես հիմնական պայման, արտաքին խաղաղություն, բարեկեցություն և անդուլ խնամք կառավարության կողմից:

Հայաստանի ճակատագիրը հայտնի է ամեն մի կրթված մարդու: Մոլի-բոնապետական պետությունների ծանր լծի ճնշման տակ՝ Հայաստանի հայրենազուրկ զավակները վաղուց են հեռացել իրենց երկրից և ապաստանել համարյա բոլոր աշխարհամասերում: Այս հանգամանքն է եղել պատճառը, և ոչ թե առևտրական ոգին, ինչպես ոչ բոլորովին իրավացի կերպով կարծում են մի քանի ևրոպացիներ,—որ հայերը վտարվել են իրենց երկրից, իսկ երկրում մնացած իրենց եղբայրակիցները միայն գույքի և կյանքի գնով են կարողացել իրենց սուրբ հայրերի անունն ու իրենց կրոնը պատմության բեմի վրա պահպանել: Իսկ նրանց ազգային ինքնուրույնությունն ու լեզուն հազարամյակների առաջ կորել են ամեն ինչ խորտակող ուժեղ հեղաշրջումների հորձանքի մեջ, օրի նմանը հազիվ թե մի այլ աշխարհամասում եղել է»²

¹ Նախաշավիղ, էջ XLII:

² Անդ, XL—XLI:

Մեծ լուսավորչի այս առածը ոչ միայն մեր լեզվի այն ժա-
մանակվա վիճակի, այլև հենց ամբողջ հայ ժողովրդի ըստն
անցյալի մի սքանչելի նկարագիր է:

Եվ եթե իր սիրած ժողովրդի այս ծանր ու անախոր վիճա-
կը զգալով, Արուսյանը փառաբանում է ռուսական զինքի հազ-
թեանակը, փրկությունը որոնում ռուսական օրինատացիան ըն-
դունելու մեջ, ապա ժամանակը նկատի ունենալով, նրա այդ
մտածելովը պետք է գիտել ճիշտ և առաջադիմական, բայց այս
մասին իր տեղում:

Մայրենի լեզվի իր անողորմությունն ու դարգացումը
պահանջելով, Արուսյանը միաժամանակ խնդիր էր դնում հայ
երկաթաուղիության առաջ՝ բազմաթիվ ուրիշ լեզուներ սովորել:
Նրա համար չկային լավ ու վատ, ընդունելի և խոտելի լեզու-
ներ, նրա համար բոլոր լեզուներն էլ հավասարապես սիրելի և
ընդունելի էին: Նա տառնձնապես անհրաժեշտ էր համարում
ռուսաց և կովկասյան ժողովուրդների լեզուներն իմանալը մի-
անգամայն հասկանալի պատճառով, որովհետև հայ ժողովրդի
շփումն ու եղբայրությունը նրանց հետ ավելի զգալի և անհրա-
ժեշտ էր: Նա պաշտպանել է տեղական լեզուները առանց խա-
րության:

Արուսյանը պահանջել է, որ օտար լեզուները նույնպես
լավ սովորեն. «գիտուն, լուսավորյալ մարդը նա է,—գրում է
«Վերքի» մեջ,—որ ամեն լեզու քանի կտրա, խտակ խոսա՞ւ՝ Եվ
իրքև ազավաղված լեզվի օրինակ, Արուսյանը մի հետաքրքիր հա-
մեմատություն է անում. «խառնիր քո սիրեկան խաչի հետ՝ ձուկը,
շաքար, կանֆետ (շաքարեղեն), չամիչ, չիր, խիզիլալա, տես
ի՞նչ համ կունենա»:²

Ժողովրդի կենդանի խոսվածքին հավատարիմ մնալու իր
ձգտումով՝ Արուսյանը երբեմն ստիպված է եղել օտարազգի լե-
զուներից անտեղի բառեր ու առանձին նախադասություններ
գործածել:

Այսպիսով, ժողովրդի կյանքում լեզվի դերի, նրա նշանա-
կության ու անհրաժեշտության հարցին մեծ դեմոկրատը տվել
է ճիշտ և հիմնավոր բացատրություն:

Անկասկած լավ է բացատրել «հին» և «նոր» լեզուներից

¹ Վերք Հայաստանի, էջ 80:

² Անդ:

յուրաքանչյուրի տեղն ու դերը, նոր լեզվի զարգացման անհրաժեշտութիւնը՝ միշտ կապելով ժողովրդի զարգացման հետ, նշանելով արևելահայ աշխարհաբար լեզվի երեք տղբյուրների (բարբառ, զրաբար և օտար) օգտագործման անհրաժեշտութիւնը:

Արովյանն ընդունել է լեզվի փոփոխութիւնը՝ կապված ժողովրդի տնտեսական-քաղաքական կյանքի փոփոխութիւն հետ:

Նա տեսել է ձևի և բովանդակութիւն կապը լեզվի մեջ, պահանջել, որ լեզուն իր ձևով հետաքրքիր ու ակրելի դառնա, և նրա միջոցով արտահայտվեն ժողովրդին հետաքրքրող հարցեր:

Արովյանը պահանջում էր սովորել բաղմաթիւ լեզուներ և յուրաքանչյուր լեզու պահել հստակ՝ խուսափելով աղճատումից ու տղավաղումից, որոնք առաջ են դալիս մեկ լեզվից մի այլ լեզվի մեջ անտեղի փոխառութիւններից:

Մեկ դար առաջ տեսական տյապիսի լուրջ հարցեր առաջ քաղելով և դրանց հիմնավոր բացատրութիւն տալով՝ Արովյանը ապահովել է իր պատվավոր տեղը մեր լեզվի պատմութիւն մեջ:

Մնում է որ մեր լեզվի պատմութիւնը գրելիս՝ խիստ կերպով հաշվի առնվի այդ:

